ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5. 1962 Общественные науки

ԳՐԱԽՍԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հատոր Ա., Հայպետհրատ, 1961)

Հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է, որ սկիզբ է առել հազարամյակների խորքից և հասել XX դարը՝ կոմունիզմի ու տիեզերական թռիչքների դարը։ Բազմաթիվ լեզուներ են գոյություն ունեցել հայերենի հետ կողք-կողքի, որոնք, սակայն, չեն դիմացել պատմության ծանր փորձություններին, անհետացել են, մահացել, թողնելով միայն իրենց անուն, երբեմն նաև որոշ հետքեր։

Հայոց լեզուն անցել է ծանր ու հերոսական մաքառումների ուղի։ Հայ ժողովուրդը զենքով ու արյունով է պահպանել ու պաշտպանել իր լեզուն, որովհետև այն զենք ու արյուն է եղել իր համար, իր գոյության համար։

Հայերենը, ինչպես և նրա ուսումնասիրումը իրենց զարգացման բարձր աստիճանին հասան սովետական շրջանում։ Նրա ամբողջ կառուցվածքի համակողմանի ուսումնասիրումը թե՛ արդի էտապում և թե՛ գոյության ամբողջ ընթացքում, հանդիսացել և հանդիսանում է սովետահայ լեզվաբանության հիմնական խնդիրը։ Շատ գործ է կատարվել այդ ուղղությամբ, բայց դեռ շատ բան կա անելու։

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրման պատվավոր խնդրին է նվիրել պրոֆ. Ս. Ղազարյանը իր գիտական բեղմնավոր գործունեության ամբողջ ընթացքում։ Հայերենի պատմության հին շրջանին է վերաբերում նոր լույս տեսած նրա հերթական գիրքը՝ «Հայոց գրական լեզվի պատմություն» ստվարածավալ աշխատության առաջին հատորը։

Նկատի ունենալով հայոց լեզվի նախագրային շրջանի վերաբերյալ քննարկվող հարցերի շրջանակները, նյութի ընդգրկումը, կարելի է ասել, որ գրախոսվող գիրքը ոչ միայն հայոց գրական լեզվի, այլև լայն առումով վերցրած հայոց լեզվի համապատասխան շրջանի պատմությունն է։

Հայոց գրական լեզվի նախապատմության նվիրված բաժնում Ս. Ղազարյանը քննում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հայոց լեզվի կազմավորումը, հայոց լեզվի բնույթը, նրա առնչակցությունները նախահայկական ցեղերի լեզուների հետ, հայոց լեզվի պատկերը նախագրային շրջանում և այլն։

Հայոց լեզվի պատմության հարցերը Ս. Ղազարյանը վերլուծում է գիտական ճիշտ մեթոդով. նա լեզվի պատմության հարցերը քննում է կապված հայ ժողովրդի պատմության հետ, իսկ մյուս կողմից այս երկուսի պատմությունը նա չի նույնացնում։ Նա ելնում է գիտական լեզվաբանության կողմից ընդունված այն ճիշտ դրույթից, որ ժողովրդի ու նրա լեզվի կազմավորումները կարող են չհամընկնել։ «Ժողովրդական լեզուն,—իրավացիորեն գրում է Ս. Ղազարյանը,—կազմավորվում ու զարգանում է իր հիմքում ունենալով ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերից մեկի լեզվի օրենքները, իսկ ժողովուրդը ձևավորվում է հասարակության զարգացման որոշ աստիճանում հաճախ համահարթելով իր մեջ ձուլված ցեղերի բոլոր առանձնահատկությունները, իր որակով տարբերվելով բոլոր այն փակներից, որոնցից գոյացել է» (էջ 17)։

Այս կարևոր հարցում ճիշտ կողմնորոշումը վճռական նշանակություն ունի հասկանալու, մի անգամ ևս հաստատելու համար այն ճշմարտությունը, որ հայոց լեզվի հնդեվրոպական բնույթն և հայ ժողովրդի տեղացի լինելը բնավ չեն հակասում և չեն բացասում իրար։

Հայոց լեզվի բնույթը քննելիս Ս. Ղազարյանը լեզվի կազմը համեմատում է թե՛ հնդեվրոպական հիմք-լեզվի հետ և թե՛ ոչիանիկ լեզուների հետ, ըստ որում նրա բնույթը որոշելիս նա ելնում է ամենից առաջ ձևաբանական կառուցվածքից և բառային կազմի միջուկը հանդիսացող, տարբեր խոսքի մասերի պատկանող առավել կարևոր ու լեզվի բոլոր էտապների համար խիստ բնորոշ բառերից։ Հնդինակը միաժամանակ ճիշտ է գնահատում ոչիանիկ լեզուների զգալի դերը հայերենի և մասնավորապես նրա բառապաշարի հարստացման գործում։

Ս. Ղազարյանը այս հարցերը քննելիս օգտագործել է հայագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումները, հիմնվել է առաջավոր

պատմարանների, լեզվաբանների հատկապես վերջին շրջանում կատարած ուսումնասիրությունների վրա։ Սակայն նա հանդես չի գալիս ուրիշների ուսումնասիրության արդյունքները վերարտադրողի դերում, այլ հարցը քննում է ըստ էության, ինքն էլ ավելի հիմնավորելով ու զարգացնելով իր կողմից ճիշտ համարված այս կամ այն տեսակետը։

Նախադարային շրջանում հայերենի բնութագրի ու նրա զարգացման հարցերի քննությունից հետո Ս. Ղազարյանն անցնում է հայոց գրերի ու հայ դպրության ստեղծման հարցերին։ Աշխատության մեջ գիտականորեն վեր է լուծված հայ գրերի գյուտը, նրա պատմական պայմանները, ըստ արժանվույն գնահատված է հայ առաջին հանճարեղ գիտնական, մեծ հայրենասեր ու քաղաքացի Մեսրոպ Մաշտոցը։ Թեև, նշենք, որ ամենարարձր գնահատությունն իսկ շատ ցածր է այն անգնահատելի ծառայության հանդեպ, որ մատուցել է այդ մեծ գիտնականն ու քաղաքացին իր ժողովրդին։

Հինգերորդ դարի հայ դասական գրականությունը, որ պատիվ կարող է բերել աշխարհի ամեն մի քաղաքակիրթ ժողովրդի, հնարավոր եղավ ստեղծել միայն Մաշտոցի հայտնագործության շնորհիվ։ Եթե հայագիտությունն այսօր կարողանում է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմությունը մինչև շուրջ 1600 տարի առաջ բնակած մեծ ժամանակաշրջանում, դարձյալ՝ շնորհիվ Մեսրոպ Մաշտոցի։ Հայ ժողովրդի պատմական անցյալը նկատի ունենալու դեպքում միանգամայն ակնհայտ է դառնում, թե ինչպիսի բացառիկ և, բառիս բուն իմաստով, կենսական նշանակություն ունեցավ գրերի գյուտը հայության պահպանման, հայ ժողովրդի գոյության համար։

Ս. Ղազարյանը այնուհետև քննում է նախամեսրոպյան հայոց գրերի գոյության, հայերենի գրերի քանակի ու հետագա ձևափոխման հարցերը։

Հինգերորդ դարի հայ գրական լեզվի դասերը քննելիս Ս. Ղազարյանը հիմք է ընդունում պրոֆ. Հր. Աճառյանի բաժանումը (Եղնկյան, Եփրեմյան, Կյուրեղյան, Ագաթանգեղյան դասեր), իսկ Աճառյանն էլ, ինչպես հայտնի է, այդ հիմնականում կատարել է որոշ բանասերների հետևությամբ։

Գրախոսվող աշխատության ստվար մասը նվիրված է գրաբարի համակարգին։ Հեղինակը գիտական մանրամասն վերլուծության է ենթարկում գրաբարի կազմը՝ նախ հնչյունական համակարգը, ապա քերականական կառուցվածքը։ Հայտնի է, որ գրաբարի բազմաթիվ դասագրքեր, ձեռնարկներ կան, որոնցում քննված է գրաբարի կառուցվածքը։ Ս. Ղազարյանի գրքի այս բաժինը էապես տարբերվում է դասագրքային բնույթի աշխատություններին հատուկ շարադրանքից և չի հանդիսանում 5-րդ դարի գրաբարի իբրև հարաբերականորեն կայուն վիճակի նկարագրություն։ Հեղինակը տալիս է գրաբարի համակարգի քննական նկարագրություններ, պատմական ուսումնասիրություններ։ Մեծ մասամբ լեզվական երևույթները վերցնում է իրենց պատմական զարգացման մեջ։ Դա վերաբերում է, թե՛ հնչյունական և թե՛ քերականական երևույթներին։

Անշուշտ հեղինակը հին հայերենի կառուցվածքի ոչ բոլոր կողմերի պատմական զարգացումը կարող էր հավասար խորությամբ ներկայացնել իր աշխատության մեջ, և դա պայմանավորված է հիմնականում այն բանով, թե հին հայերենի որ հարցը ի՞նչ չափով է ուսումնասիրված։ Հին հայերենի ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրման բաժնում հատկապես խորն է ու բազմակողմանի հոլովման համակարգի պատմական քննությունը, ուր հեղինակը հենվում է հատկապես պրոֆ. Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության 3-րդ հատորի և պրոֆ. Գ. Ջահուկյանի «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության վրա։ Այս առիթով նշենք, որ պրոֆ. Ս. Ղազարյանը լայն չափերով օգտագործել է գոյություն ունեցող ուսումնասիրությունները՝ սկսած այնպիսի խոշոր լեզվաբանների աշխատություններից, ինչպիսիք են Մեյեն, Աճառյանը, վերջացրած սկսնակ մասնագետների դեռևս անտիպ դիսերտացիաներով, և իրեն հատուկ բարեխղճությամբ ու համեստությամբ նշել է այդ բոլորը։

Հին հայերենի գոյական անվան ուսումնասիրման մեջ պատմականության տեսակետից ուշագրավ են հատկապես հոլովական համակարգի զարգացման և հոլովական իմաստների դրսևորման հիմնական օրինաչափությունները, հոլովման տիպերի ու միջոցների ծագմանը նվիրված հատվածները։ Այնուհետև հեղինակը անցնում է մյուս խոսքի մասերի քննությանը։

Հանգամանորեն և գիտական անհրաժեշտ խորությամբ են քննված նաև դերանունները և նրանց հոլովումը, բայական համակարգը։ Բայը, որ հին հայերենի (և ոչ միայն հին հայերենի) քերականական կառուցվածքում գրաված տեղի և քերականական կարգերի տեսակետից ամենահարուստ խոսքի մասն է, աշխատության մեջ ներկայացված է ամենայն մանրամասնությամբ։ Քննված են բայաձևերի կազմության, ծագման ու պատմական զարգացման հարցերը։

Գրախոսվող աշխատության մեջ զգալի տեղ է տրված գրաբարի շարահյուսական կառուցված-

քի ուսումնասիրման։ Հայտնի է, որ գրաբարի կառուցվածքի մեջ ամենաքիչ ուշադրության արժանացած բաժինը շարահյուսությունն է։ Ս. Ղազարյանը օգտագործելով եղած գրականը և անձամբ ուսումնասիրելով գրաբարի շարահյուսական կառուցվածքը՝ իր գրքում առաջին անգամ տվել է գրաբարի պարզ նախադասության շարահյուսության ամբողջական վերլուծությունը։ Կա մանրամասնորեն պարզաբանում է նախադասության ամբողջ կառուցվածքը, գլխավոր անդամները, ենթակայի ու ստորոգյալի լրացումները, նրանց բոլորի արտահայտությունը։ Հեղինակը քննում է նախադասության անդամները արտահայտություններ ոչ միայն առանձին բառերով, այլև բառակապակցություններով, նախդրավոր կապակցություններով, որոնք գրաբարում գոյալի կշիռ ունեին։

Շարահյուսության բաժնում առանձնակի ուշադրություն է դարձված այն երևույթների վրա, որոնք գրաբարի յուրահատկությունն են հանդիսանում (սեռական ու տրական հոլովներով ենթակա, մի շարք նախդրավոր կապակցություններով արտահայտված երկրորդական անդամներ, նախադասության անդամների համաձայնություն, հոդերի դերը գրաբարի համաձայնության համակարգում և այլն)։ Ինչպես ամբողջ աշխատության մեջ, այնպես էլ հատկապես շարահյուսության բաժնում հեղինակն իր եզրակացությունները հիմնում, գատողություններն անում է հարուստ փաստական նյութի հիման վրա։

Ուսումնասիրելով նախադասության կառուցվածքը՝ պրոֆ. Ս. Ղազարյանը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ «Գրաբարի նախադասությունը իր կառուցվածքով ու արտահայտած բազմապիսի հարաբերություններով վկայում է հայերենի զարգացածության ու մշակվածության բարձր աստիճանի մասին։ Նույնիսկ հինգերորդ դարում գրի առնված ժողովրդական երգերի պատառիկների մեջ հանդիպում են քերականական բազմազան իմաստներ արտահայտող պարզ ու բարդ նախադասությունների տեսակներ, որոնք ցույց են տալիս, որ մեր թվականությունից շատ ու շատ առաջ հայերենը ստեղծել է նախադասությունների այն նախատիպերը, որոնց մենք հանդիպում ենք մեր լեզվի գրավոր շրջանում» (էջ 391—392)։

Պրոֆ. Ս. Ղազարյանի «Հայոց գրական լեզվի պատմություն» աշխատության գրախոսվող գիրքը այնքան արժանիքներ ունի, որ նրա առանձին թերությունները ու բացերը չեն իջեցնում գրքի արժեքը, և այն համարձակորեն կարելի է համարել արժեքավոր ներդրում հայոց լեզվի պատմության ուսումնասիրման գործում։

Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ